ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 40 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նախապատրաստման բաժնի ավագ հրահանգչի (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-8) Փրկարար ծառայության պաշտոնի անձնագրի 3.1. կետի «Բարձրագույն տեխնիկական կամ մասնագիտական կրթություն» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթություն» բառերով:

2) Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ նոր հավելվածներով՝

ա. «Փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Բ-1)»,

բ. «Փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Գ-1)»,

գ. «Փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Գ-10)»:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

23.05.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023թ. հուլիս 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նախապատրաստման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-8).

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ հրահանգիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Ավագ հրահագիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ հրահանգչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ հրահանգիչը.

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Բաժնի պետին, Վարչության պետին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով.
2. Աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ.
3. իրականացնել Բաժնին հանձնարարված աշխատանքները, Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Բաժնի պետին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. Վարչության պետի (տեղակալի), Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ :

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.

- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իրականացնել քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների հետ կապված աշխատանքները.
- իրականացնել տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված նորմատիվ փաստաթղթերի մշակման և դրանց ճշգրտման աշխատանքները.
- բնակչության պատսպարման հարցերի բարելավման և պաշտպանական կառույցների ֆոնդի զարգացման վերաբերյալ մասնագիտացված աշխատանքային խմբերի ձևավորման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ.
- իրականացնել պաշտպանական կառույցների, դրանց տվյալների հաշվառման աշխատանքները.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների պատրաստականության բերման հսկողության աշխատանքները.
- իրականացնել բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման ու պատսպարման կազմակերպման աշխատանքները
- իր իրավասության շրջանակներում մասնակցել պահեստային կառավարման կետերի ուսումնասիրությունների անցկացմանը և դրանց սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.
- իր իրավասության շրջանակներում մեթոդական օգնության ցուցաբերել կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կայուն գործունեության ապահովմանն ուղղված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքներին.
- ռազմական դրության (պատերազմի) ժամանակ իր իրավասության շրջանակներում իրականացնել գործունեությունը շարունակող տնտեսության օբյեկտների ռեեստրի վարումը.
- իր իրավասության շրջանակներում մասնակցել պաշտպանական կառույցների ուսումնասիրությունների անցկացմանը.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի, հատուկ կարևորագույն օբյեկտների աշխատողների, դրանց սանիտարական գոտու և սահմանամերձ բնակավայրերի բնակչության անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածության հաշվառման աշխատանքները.
- իրականացնել << տարածքում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալների հաշվառման աշխատանքները.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության ինժեներական կազմավորումների ստեղծման, հաշվառման աշխատանքների ամփոփումը.

- իր լիազորությունների սահմաններում մասնակցել քաղաքացիական պաշտպանության ոլորտի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին.
- Բաժնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրա կատարման ընթացքի մասին մշակել հաշվետվություններ ու վերլուծություններ.
- իր լիազորությունների սահմաններում առաջարկությունների մշակել ՀՀ տարածքում կառուցվող և վերակառուցվող օբյեկտների, կառույցների, տրանսպորտային ուղիների և ինժեներական ցանցերի նախագծերում քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի և կանոնների ներառման վերաբերյալ.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության պլաններում ինժեներական ապահովման և տարահանման միջոցառումների անցկացմանը վերաբերող բաժինների մշակման ու դրանց ճշգրտման աշխատանքները.
- ռազմական դրության ժամանակ իր իրավասության շրջանակներում մասնակցել ինժեներական հետախուզության կազմակերպմանը և համակարգմանը.
- իրականացնել վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման, կենսաապահովման պլանների մշակման և դրանց ճշգրտման աշխատանքները.
- իր իրավասության շրջանակներում մասնակցել բնակչության տարահանման կազմակերպմանն ու համակարգմանը.
- Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը
Բարձրագույն կրթություն.
3.2. Մասնագիտական գիտելիքները
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.
3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը
Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:
4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում
4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:
4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:
4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխգնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023թ. հուլիսի 13-ի N 17-լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) փրկարարական ուժերի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Բ-1):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալին (այսուհետ՝ Տնօրեն), Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալները և Վարչության ստորաբաժանումների պետերը.

Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալներից մեկը:

1.4. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.
2. իր իրավասության սահմաններում տալիս է հրամաններ, ցուցումներ և հանձնարարականներ.
3. պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում Տնօրենին և Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալին՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.
4. ապահովում է Տնօրենի և Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալի հրամանների, ցուցումների ու հանձնարարականների կատարումը և զեկուցում արդյունքների մասին.
5. իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.
6. ընդունում է Վարչության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, վերլուծում դրանք և միջոցներ ձեռնարկում տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ.
7. օրենքով, այլ իրավական ակտերով, Ծառայության և Վարչության կանոնադրություններով նախատեսված գործունեության բնագավառներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ առաջարկություններ է ներկայացնում Տնօրենին (Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալին).
8. Տնօրենին (Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալին) առաջարկություններ է ներկայացնում Վարչության հաստիքներով նախատեսված պաշտոններում կադրերի ընտրության, նշանակման, տեղաբաշխման, տեղափոխման, Վարչության ծառայողներին պաշտոնից ազատման, նրանց նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ կիրառելու և ծառայության հետ կապված այլ հարցերի վերաբերյալ.
9. հսկողություն է սահմանում հրշեջ-փրկարարական, հատուկ հրշեջ և փրկարարական ստորաբաժանումների նախապատրաստման կազմակերպման և անցկացման նկատմամբ, Ծառայության տնօրենին առաջարկություններ է ներկայացնում արտակարգ իրավիճակներում փրկարար ուժերի համագործակցության, նրանց տեխնիկական զինվածության օգտագործման կարգի վերաբերյալ՝ անկախ նրանց գերատեսչական պատկանելությունից.
10. իր իրավասության շրջանակներում Տնօրենին առաջարկություն է ներկայացնում ուժերն ու միջոցները ներգրավելու կարգը սահմանելու ուղղությամբ, Նախարարի կամ Տնօրենի հանձնարարությամբ անմիջականորեն ղեկավարում է նրանց գործողությունները խոշոր հրդեհների մարման, տարերային աղետների և խոշոր արտադրական վթարների հետևանքների վերացման ժամանակ.
11. ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

12. ապահովում է Վարչության և Ծառայության այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները.

13. Նախարարի, Տնօրենի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը.

Պարտականությունները՝

- վերահսկել ենթակա ստորաբաժանումների կողմից կատարվող հրդեհաշիջման, որոնողափրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հատուկ բարդության աշխատանքները.
- վերահսկել իրավական ակտերի նախագծերի, ծառայողական ու մասնագիտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման գործընթացը.
- վերահսկել Հայաստանի Հանրապետությունում փրկարար ուժերի գործունեության, փրկարարական աշխատանքների իրականացման, փրկարար ուժերի ստեղծման, ինչպես նաև հակահրդեհային իրավիճակի վերլուծության հիման վրա հրդեհների արդյունավետ մարմանն ուղղված հանրապետական և տեղական նպատակային ծրագրերի մշակման աշխատանքները՝ համակարգելով դրանց կատարումը.
- վերահսկել հանրապետության տարածքում փրկարարական գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ առաջարկությունների մշակման, վերլուծությունների կատարման աշխատանքները և ներկայացնել Տնօրենին (Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալին).
- իր իրավասությունների շրջանակներում վերահսկել մասնակցությունը Ծառայության տարածքային ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրություններին և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նրանց մեթոդական օգնության ցուցաբերմանը.
- վերահսկել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գերատեսչական հակահրդեհային ծառայությունների, հասարակական, կամավորական փրկարարական կազմավորումների հրշեջ-փրկարարական տեխնիկայի հաշվառման աշխատանքները և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն փրկարարական, վթարափրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում նրանց ներգրավման ուղղությամբ.
- արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ ղեկավարել ու համակարգել պետական, գերատեսչական փրկարարական ուժերի և հասարակական կազմավորումների գործողությունները.
- բնակավայրերը և կազմակերպությունները պահպանող փրկարարական, հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ստեղծման և համալրման նպատակով կազմակերպել առաջարկությունների մշակումը.
- կազմակերպել փրկարարների ու փրկարարական կազմավորումների որակավորման գործընթացը.
- մասնակցել փրկարարական ծառայողների ատեստավորմանը.
- մասնագիտական և ծառայողական պատրաստության բարձրացման նպատակով կատարել ուսումնասիրություն ու սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն.
- Տնօրենի հաստատմանը ներկայացնել փրկարարական ուժերի անձնակազմի տեսական և գործնական հմտությունների

կատարելագործմանն ուղղված ուսումնական թեմատիկ պլանները և հսկողություն իրականացնել պարապմունքների արդյունավետ անցկացման ուղղությամբ.

- փրկարար ուժերի տեսական և գործնական հմտությունները կատարելագործելու, մշտական բարձր պատրաստականություն ապահովելու նպատակով հսկողություն սահմանել վարժանքների կազմակերպման և անցկացման նկատմամբ՝ գերատեսչական, հասարակական, կամավորական և համայնքային փրկարարական կազմավորումների ընդգրկմամբ.
- Նախարարի, Տնօրենի հանձնարությամբ մասնակցել արտակարգ իրավիճակների արձագանքման թեմաներով կազմակերպված միջազգային կոնֆերանսներին և գիտաժողովներին.
- Նախարարի կամ Տնօրենի հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն, կազմակերպել հանրապետության փրկարար ուժերի մասնակցությունը միջազգային փրկարարական աշխատանքներին.
- ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների տարածքներում տեղի ունեցած խոշոր արտակարգ իրավիճակները, դրանց վերացման ընթացքն ու մարտավարական գործողությունները, ինչպես նաև ուժերի փոխգործողությունների արդյունավետությանն ուղղված միջոցառումները.
- հսկողություն սահմանել հրշեջ-փրկարարական ջոկատների կողմից կազմակերպությունների հրդեհաշիջման օպերատիվ պլանների ու քարտերի կազման նկատմամբ.
- վերահսկել մասնակցությունը փրկարար ուժերի մասնագիտական պատրաստության ծրագրերի մշակման և ուսուցման կազմակերպման աշխատանքները.
- իր իրավասության սահմաններում մասնակցել քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, բարձրացված հարցերի լուծմանը.
- Նախարարի, Տնօրենի (Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադասի սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և ունակությունների բարելավման համար վերապատրաստումներին.
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից պահանջել անվտանգության կանոնների պահպանումը.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Ծառայության կենտրոնական ապարատի վարչության պետ կարող է նշանակվել փրկարարական ծառայության այն ծառայողը, որը նշանակման պահին զբաղեցնում է փրկարար ծառայության ղեկավարի կամ տեղակալի պաշտոն, բարձրագույն խմբի պաշտոն կամ մեկ տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի փրկարար ծառայության փոխգնդապետից ոչ ցածր կոչում կամ ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գեներալ-մայորի կոչում:

Հավելված
Հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) փրկարարական ուժերի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Գ-1):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին.

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Վարչության պետի տեղակալին անմիջականորեն ենթակա են Վարչության ենթակա ստորաբաժանումների պետերը.

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետերից որևէ մեկը:

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իր իրավասության սահմաններում ապահովում է Վարչության Փրկարարական ուժերի համակարգման, Հրշեջ-փրկարարական պատրաստության բաժինների և հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի գործունեության ղեկավարումն ու համակարգումը, կազմակերպում է նրանց աշխատանքները.

2. փոխարինում է Վարչության պետին՝ վերջինիս բացակայության ժամանակ, անձնական պատասխանատվություն է կրում Վարչության կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների կատարման համար.

3. լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, Վարչության պետին ներկայացնում առաջարկություններ.

4. իր իրավասության շրջանակներում շփվում է Ծառայության տնօրենի (Վարչության գործունեությունը համակարգող Ծառայության տնօրենի տեղակալի), նրա տեղակալների, Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պետերի ու ծառայողների հետ, մասնակցում է նիստերի, խորհրդակցությունների, ապահովում է Վարչության բաժինների և այլ մարմինների փոխհարաբերությունները.

5. մասնակցում է Ծառայության և Վարչության ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրների իրականացմանն ուղղված գործողություններին, լուծում է մասնագիտական նշանակության խնդիրներ, ներկայացնում է առաջարկություններ.

6. ապահովում է Վարչության անձնակազմի աշխատանքային և ծառայողական կարգապահությունը, պատրաստականությունը, Վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ նրանց խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերի լուծման համար.

7. Ծառայության տնօրենի և Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.

- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- ապահովել ենթակա ստորաբաժանումների կողմից կատարվող հրդեհաշիջման, որոնողափրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հատուկ բարդության աշխատանքների իրականացումը.
- ապահովել իրավական ակտերի նախագծերի, ծառայողական ու մասնագիտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացումը.
- ապահովել Հայաստանի Հանրապետությունում փրկարար ուժերի գործունեության, փրկարարական աշխատանքների իրականացման, փրկարար ուժերի ստեղծման, ինչպես նաև հակահրդեհային իրավիճակի վերլուծության հիման վրա հրդեհների արդյունավետ մարմանն ուղղված հանրապետական և տեղական նպատակային ծրագրերի մշակման աշխատանքների իրականացումը՝ համակարգելով դրանց կատարումը.
- ապահովել հանրապետության տարածքում փրկարարական գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ առաջարկությունների մշակման, վերլուծությունների կատարման աշխատանքների իրականացումը և իր իրավասության սահմաններում ներկայացնել Ծառայության տնօրենին (Վարչության գործունեությունը համակարգող Ծառայության տնօրենի տեղակալին).
- իր իրավասությունների շրջանակներում ապահովել մասնակցությունը Ծառայության տարածքային ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրություններին և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նրանց մեթոդական օգնության ցուցաբերմանը.
- ապահովել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գերատեսչական հակահրդեհային ծառայությունների, հասարակական, կամավորական փրկարարական կազմավորումների հրշեջ-փրկարարական տեխնիկայի հաշվառման աշխատանքների իրականացումը և իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն փրկարարական, վթարափրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում նրանց ներգրավման ուղղությամբ.
- արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ իր իրավասության սահմաններում համակարգել պետական, գերատեսչական փրկարար ուժերի և հասարակական կազմավորումների գործողությունները.
- իր իրավասության սահմաններում կազմակերպել առաջարկությունների մշակման աշխատանքները՝ բնակավայրերը և կազմակերպությունները պահպանող փրկարարական, հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ստեղծման և համալրման վերաբերյալ.
- իր իրավասության սահմաններում կազմակերպել փրկարարների ու փրկարարական կազմավորումների որակավորման աշխատանքները.
- մասնակցել փրկարարական ծառայողների ատեստավորմանը,
- մասնագիտական և ծառայողական պատրաստության բարձրացման նպատակով կատարել ուսումնասիրություն ու սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն.
- Տնօրենի հաստատմանը ներկայացնել փրկարար ուժերի անձնակազմի տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանն ուղղված ուսումնական թեմատիկ պլանները և կազմակերպել պարապմունքների արդյունավետ անցկացումը.
- փրկարար ուժերի տեսական և գործնական հմտությունները կատարելագործելու, մշտական բարձր պատրաստականություն ապահովելու նպատակով իր իրավասության սահմաններում կազմակերպել և իրականացնել վարժանքներ՝ գերատեսչական, հասարակական, կամավորական և համայնքային փրկարարական կազմավորումների ընդգրկմամբ.
- Վարչության պետի հանձնարությամբ մասնակցել արտակարգ իրավիճակների արձագանքման թեմաներով կազմակերպված միջազգային կոնֆերանսներին և գիտաժողովներին.
- Վարչության պետի հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն, իր իրավասության սահմաններում կազմակերպել հանրապետության փրկարար ուժերի մասնակցությունը միջազգային փրկարարական աշխատանքներին.
- ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների տարածքներում տեղի ունեցած խոշոր

արտակարգ իրավիճակները, դրանց վերացման ընթացքն ու մարտավարական գործողությունները, մշակել ուժերի փոխգործողությունների արդյունավետությանն ուղղված միջոցառումներ.

- իր իրավասության սահմաններում աջակցել հրշեջ-փրկարարական ջոկատների կողմից կազմակերպությունների հրդեհաշիջման օպերատիվ պլանների ու քարտերի կազմմանը.
- ապահովել մասնակցությունը փրկարարական ուժերի մասնագիտական պատրաստության ծրագրերի մշակման և ուսուցման կազմակերպման աշխատանքների իրականացումը.
- իր իրավասության սահմաններում մասնակցել քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, բարձրացված հարցերի լուծմանը.
- Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադասի սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և ունակությունների բարելավման համար վերապատրաստումներին.
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարարական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը վերջին երկու տարում զբաղեցրել են փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայորից ոչ ցածր կոչում կամ ունեն հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գնդապետի կոչում:

Հավելված
Հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) փրկարարական ուժերի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Գ-10):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին.

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Վարչության պետի տեղակալին անմիջականորեն ենթակա են Վարչության ենթակա ստորաբաժանումների պետերը.

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետերից որևէ մեկը:

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իր իրավասության սահմաններում ապահովում է Վարչության Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման, Կարևորագույն օբյեկտների պահպանության բաժինների և «ՀԱԷԿ»-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատի գործունեության ղեկավարումն ու համակարգումը, կազմակերպում է նրանց աշխատանքները.

2. փոխարինում է Վարչության պետին՝ վերջինիս բացակայության ժամանակ, անձնական պատասխանատվություն է կրում Վարչության կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների կատարման համար.

3. լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, Վարչության պետին ներկայացնում առաջարկություններ.

4. իր իրավասության շրջանակներում շփվում է Ծառայության տնօրենի (Վարչության գործունեությունը համակարգող Ծառայության տնօրենի տեղակալի), նրա տեղակալների, Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պետերի ու ծառայողների հետ, մասնակցում է նիստերի, խորհրդակցությունների, ապահովում է Վարչության բաժինների և այլ մարմինների փոխհարաբերությունները.

5. մասնակցում է Ծառայության և Վարչության ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրների իրականացմանն ուղղված գործողություններին, լուծում է մասնագիտական նշանակության խնդիրներ, ներկայացնում է առաջարկություններ.

6. ապահովում է Վարչության անձնակազմի աշխատանքային և ծառայողական կարգապահությունը, պատրաստականությունը, Վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ նրանց խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերի լուծման համար.

7. Ծառայության տնօրենի և Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.

- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- ապահովել ենթակա ստորաբաժանումների կողմից կատարվող հրդեհաշիջման, որոնողափրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հատուկ բարդության աշխատանքների իրականացումը.
- ապահովել իրավական ակտերի նախագծերի, ծառայողական ու մասնագիտական խնդիրները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացումը.
- ապահովել Հայաստանի Հանրապետությունում փրկարար ուժերի գործունեության, փրկարարական աշխատանքների իրականացման, փրկարար ուժերի ստեղծման, ինչպես նաև հակահրդեհային իրավիճակի վերլուծության հիման վրա հրդեհների արդյունավետ մարմանն ուղղված հանրապետական և տեղական նպատակային ծրագրերի մշակման աշխատանքների իրականացումը՝ համակարգելով դրանց կատարումը.
- ապահովել հանրապետության տարածքում փրկարարական գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ առաջարկությունների մշակման, վերլուծությունների կատարման աշխատանքների իրականացումը և իր իրավասության սահմաններում ներկայացնել Ծառայության տնօրենին (Վարչության գործունեությունը համակարգող Ծառայության տնօրենի տեղակալին).
- իր իրավասությունների շրջանակներում ապահովել մասնակցությունը Ծառայության տարածքային ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրություններին և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նրանց մեթոդական օգնության ցուցաբերմանը.
- ապահովել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գերատեսչական հակահրդեհային ծառայությունների, հասարակական, կամավորական փրկարարական կազմավորումների հրշեջ-փրկարարական տեխնիկայի հաշվառման աշխատանքների իրականացումը և իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն փրկարարական, վթարափրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում նրանց ներգրավման ուղղությամբ.
- արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ իր իրավասության սահմաններում համակարգել պետական, գերատեսչական փրկարար ուժերի և հասարակական կազմավորումների գործողությունները.
- իր իրավասության սահմաններում կազմակերպել առաջարկությունների մշակման աշխատանքները՝ բնակավայրերը և կազմակերպությունները պահպանող փրկարարական, հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ստեղծման և համալրման վերաբերյալ.
- իր իրավասության սահմաններում կազմակերպել փրկարարների ու փրկարարական կազմավորումների որակավորման աշխատանքները.
- մասնակցել փրկարարական ծառայողների ատեստավորմանը,
- մասնագիտական և ծառայողական պատրաստության բարձրացման նպատակով կատարել ուսումնասիրություն ու սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն.
- Տնօրենի հաստատմանը ներկայացնել փրկարար ուժերի անձնակազմի տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանն ուղղված ուսումնական թեմատիկ պլանները և կազմակերպել պարապմունքների արդյունավետ անցկացումը.
- փրկարար ուժերի տեսական և գործնական հմտությունները կատարելագործելու, մշտական բարձր պատրաստականություն ապահովելու նպատակով իր իրավասության սահմաններում կազմակերպել և իրականացնել վարժանքներ՝ գերատեսչական, հասարակական, կամավորական և համայնքային փրկարարական կազմավորումների ընդգրկմամբ.
- Վարչության պետի հանձնարությամբ մասնակցել արտակարգ իրավիճակների արձագանքման թեմաներով կազմակերպված միջազգային կոնֆերանսներին և գիտաժողովներին.
- Վարչության պետի հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն, իր իրավասության սահմաններում կազմակերպել հանրապետության փրկարար ուժերի մասնակցությունը միջազգային փրկարարական աշխատանքներին.
- ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների տարածքներում տեղի ունեցած խոշոր

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գնդապետի կոչում:

արտակարգ իրավիճակները, դրանց վերացման ընթացքն ու մարտավարական գործողությունները, մշակել ուժերի փոխգործողությունների արդյունավետությանն ուղղված միջոցառումներ.

- իր իրավասության սահմաններում աջակցել հրշեջ-փրկարարական ջոկատների կողմից կազմակերպությունների հրդեհաշիջման օպերատիվ պլանների ու քարտերի կազմմանը.
- ապահովել մասնակցությունը փրկարարական ուժերի մասնագիտական պատրաստության ծրագրերի մշակման և ուսուցման կազմակերպման աշխատանքների իրականացումը.
- իր իրավասության սահմաններում մասնակցել քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) և փրկարարական ծառայողների զեկուցագրերի քննարկմանը, բարձրացված հարցերի լուծմանը.
- Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադասի սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և ունակությունների բարելավման համար վերապատրաստումներին.
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարարական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը վերջին երկու տարում զբաղեցրել են փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայորից ոչ ցածր կոչում կամ ունեն հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն